

պիտի դժուարին կացութիւն մը շրջապատող բոլոր պարագաներուն, Պոլսոյ մէջ ալ Սուրբ Յակոբայ դատին նուիրեց ինքզինքը, «սոսնձապէս մակրդեցաւ», անոր, Հաննէի բացատրութեամբ. որովհետեւ, կը խոստովանի Արդատ, «ի գուժ շարժեցայ Սրբոյ Տանն Աստուծոյ, որ միշտ կայր սեւեւեալ յոգի իմոյս անարժանութեան յառաջ իսկքան զայսոսիկ, որպէս գրեալթէ ի մանկութենէ:»

Պոլիս ամէն տեղ, մանաւանդ բեմէն՝ պատմեց, նկարագրեց Երուսաղէմայ Աթոռին վիճակը: Նուէրներ առատօրէն եկան. բայց առատ նուէրը չէր որ պիտի բարեկարգէր Աթոռը: Արդատ արդէն ծրագրած էր իր մտքին մէջ Ս. Աթոռին բարեկարգութիւնը, բաժնելով զայն Պոլսոյ պատրիարքութեան: Այս ծրագրին վրայ հիմնուած իր տեսութիւնները՝ գնահատուեցան ամէն կողմէ: Միայն «անխիղճը եւ անահլք ոմանը», թէեւ ուղեցին ստեղ Արդատին ծրագիրը, զրպարտեցին զինքը, բայց այսպիսի բարբանջումներ նշանակութիւն չունեցան. որովհետեւ անկեղծ չէին, նպատակաւոր էին: Այս շարամիտ ընթացքը աւելի տաքաց կոլտար դէպ ի իր ծրագրին գործադրութիւնը: Անկեղծութիւնը կը մարմնանար կարծես: Արդատ այնքան սիրուեցաւ, այնքան տիրեց սրտերուն, որ գրեթէ յանկարծակիի եկաւ, երբ Մահտեսի Յարութիւն Մուրատեան, Մահտեսի Սեղբեստրոս Երեւանենց, Պոլսոյ բոլոր երեւելիներուն հետ խորհրդակցելով՝ առաջարկեցին իրեն, «եկ, դու լեր մեզ պատրիարք եւ Առաջնորդ Կ. Պոլսոյ Աթոռոյս եւ յետոյ զորն եւ կամիս», զանի Պատրիարք ըրէ Երուսաղէմի Աթոռոյն: Ամէնէն արմատական, ամէնէն խելացի առաջարկ մ'էր այս. որովհետեւ այն միջոցին ուրիշ ո՛վ ալ ըլլար Պոլսոյ պատրիարք՝ կարելի չէր որ հաւանէր այնպիսի ծրագրի մը գործադրութեան, եւ եթէ հաւանէր իսկ՝ կարելի չէր որ սրտակից եւ գաղափարակից մէկը գտնէր իրեն